

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՉՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ
2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ



*ՄՇԱԿՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ*

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎՐ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 42-Ն

որոշմամբ

գ. Չորակապ-2016 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ
- 1.12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
- 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
- 3.3. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
- 3.4. ՀՆԳԱՍՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՍՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ
- 4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎ ԱԿԵՐՊՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի 2016-2020 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն համայնքի զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության, լեռնային բնակավայրերի զարգացմանն ու աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, կենսունակության ապահովման պայմանները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից գանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա անկախությունը կորցրած ժողովրդի համար բռնի տեղաշարժ է եղել հարազատ հայրենիքի մի բնակավայրից մեկ այլ բնակավայր:

1829 թվականի սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին՝ կարողացավ ապահովել իր խաղաղ գոյակցությունը:

Ձորակապ գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Բասենի, Կարսի և Վանի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Սկզբնական շրջանում գյուղում բնակություն են հաստատել շուրջ 50 գաղթական ընտանիքներ:

Ըստ տոհմագրական տվյալների՝ 1831 թ-ին գյուղն ունեցել է 182, 1897թ.-ին՝ 836, 1926 թ-ին՝ 962, 1939 թ-ին՝ 908, 1959 թ-ին՝ 658, 1970 թ-ին՝ 878, 1979 թ-ին՝ 961 հայ բնակիչ:

Թուրքերն իրենց տիրապետության սահմաններում թուրքացրել են տեղանունները՝ անկախ բնակավայրի էթնիկական կազմից: Ձորակապը մինչև 20-րդ դարի սկիզբը անվանվել է Բողասքյասան, Պողազքեսեն, որը թարքմանաբար նշանակել է **Ձորաքերան կամ Ձորի նեղ տեղամաս:**

Գյուղը տեղադրված է բլրապատ փոքահովտում՝ ծովի մակարդակից 1760 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 350-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են:

Ունի տուֆ քարի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Հայկական լեռնաշխարհի այս վայրը քրիստոնյա հայը սրբացրել է իր եկեղեցիներով, մատուռներով ու խաչքարերով:

Գյուղում եղել է փոքր չափերով եկեղեցի: Երբ գյուղը մեծացել է՝ գյուղացիները դիմել են Էջմիածնի «Մայր աթոռին», Ալեքսանդրապոլի գավառին՝ նոր, մեծ եկեղեցի կառուցելու համար: Մակայն մերժվել է նոր, մեծ եկեղեցու կառուցումը հին եկեղեցի ունենալու 3

պատճառով: Սակայն համագյուղացի Ղազար Դանիելյանը, որը շատ լավ է տիրապետել ռուսերեն լեզվին, դիմել է Նիկոլայ Երկրորդին, որպեսզի թույլատրեն նոր եկեղեցի կառուցել: Նիկոլայ Երկրորդը թույլատրում է Ձորակապ գյուղում կառուցել մի նոր եկեղեցի, որն ունի ռուսական եկեղեցու ոճ: Եկեղեցու շինարարությունը սկսվել է 1869 թվականին և ավարտվել է 1871 թվականին:

Ներկայումս գյուղի կենտրոնում կանգուն է սրբատաշ կարմիր տուֆ քարով կառուցված Մարիամ Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը մասնակի վերանորոգվել է 1990-92 թվականներին և ներկայումս գործում է:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում: Գյուղի շրջակայքում պահպանվել են բազալտից ու տուֆից մենաքարեր, բնակատեղիներ, գերեզմանոցներ:

1915-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում:

Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Ձորակապը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 100 արևմտահայ գաղթական ընտանիքների:

1887 թվականից Ձորակապը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1951-1953 թթ. Գյուղի կոլտնտեսությունը միացյալ տնտեսություն է վարել Մարալիկի կոլտնտեսության հետ: 1953 թվականին այն առանձնացել է իր վարչական տարածքով և վարել առանձին կոլեկտիվ տնտեսություն՝ սպասարկվելով Մարալիկի ավանային խորհրդի կողմից: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո Ձորակապը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ և կարտոֆիլի մշակությամբ: 1970-ական թվականներից հետո համայնքի աշխատունակ բնակչության զգալի մասը աշխատել են Մարալիկ ավանի արտադրական

ձեռնարկություններում, բնակչության սպասարկման ոլորտում, տրանսպորտի, կապի ու այլ կազմակերպություններում:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ռոտզման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբուստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն:

Գյուղից 5 կմ հարևանությամբ է գտնվում Սառնաղբյուրի արհեստական ջրամբարը, որը կառուցվել է 1972 թվականին և ունի 4.2 մլն. խ. մ. տարողություն: Ջրամբարը սնվում է Չլկան գետակի, ձնհալի և անձրևային ջրային պաշարներից: Ջրամբարից ինքնահոս եղանակով կարող է ռոտզվել բնակավայրի 310 հա վարելահողեր, սակայն ցանցի քայքայվածության պատճառով ջուրը նպատակին չի ծառայում և ռոտզվում է ընդամենը 60-80 հա վարելահող:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է 1930-ական թվականներից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, սկուլմբ, գրադարան, բուժ. կետ և առևտրի օբյեկ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Ձորակապի կոլեկտիվ տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես մսի և կաթի արտադրության բարձր ցուցանիշներով:

Բնակավայրը մոտ լինելով Մարալիկ ավանին, այստեղ չեն հիմնադրվել վել արտադրական ձեռնարկություններ, բնակչության սպասարկման ոլորտի օբյեկտներ ու մշակութային օջախներ: Մինչև 1991 թվականը բնակավայրի աշխատունակ բնակչության զգալի մասը իր զբաղվածությունն է ունեցել Մարալիկի լուսատեխնիկական էլեկտրոսարքավորումների գործարանում, բամբակամանվածքային ֆաբրիկայում, շինանյութերի և իրերի կոմբինատում, գյուղատնտեսության սպասարկման, տրանսպորտի և կապի ոլորտի տարպեր կազմակերպություններում ու հիմնարկներում:

Սակայն գյուղատնտեսական և արդյունաբերական նշված ձեռնարկությունները ներկայումս չեն գործում և համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ և արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից գաղթել են ավելի քան 60 ընտանիքներ:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է սովել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Ձորակապի միջնակարգ դպրոցը իր բարձր առաջադիմությամբ և բարի ավանդույթներով մեծ ճանաչում ունի ինչպես տարածաշրջանում, այնպես էլ հանրապետությունում: Յուրանքանչյուր տարի, դպրոցի երկու տասնյակից ավելի շրջանավարտներ տեղ են զբաղեցնում հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Համայնքի նշանավոր մարդկանցից են՝

Հրաչ Սաղաթեյան- բժշկական գիտությունների թեկնածու ուռուցքաբան

Ազատ Ալեքսանի Սարգսյան – ՀՀ վաստակավոր անասնաբույժ

Հայր Քամալյան – բժշկական գիտությունների դոցենտ , սրտաբան

Մաքսիմ Հրաչի Մուրադյան—մաթեմատիկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր

Արամ Հրաչի Մուրադյան – մաթեմատիկական գիտությունների դոցենտ

Հակոբ Երվանդի Աղաբեկյան – թեթև արդյունաբերական գիտությունների թեկնածու

Ձորակապը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում մասնակիցները 274 , գյուղը տվել է 78 զոհ, որոնց հիշատակին է նվիրված գյուղի կենտրոնում **1982 թվականին** կանգնեցված հուշարձան կոթողը:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 11 ազատամարտիկներ:

Նրանցից շատերը պարգևատվել են՝ տարբեր մեդալներով և շքանշաններով:

1/ Մելիքսեթ Աղվվանի Բաղդասարյան երկրորդ աստիճանի մարտական իսա շքանշանակիր

2/ Սեյրան Ռաֆիկի Մուրադյան – բազմաթիվ մեդալներ և շքանշանների կրող:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Ձորակապ գյուղը գտնվում Արագած լեռան արևմտյան ստորոտում, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան մասում և տեղաբաշխված է Կապուտան գետակի արևելյան տարածքում:

Հյուսիսից և արևմուտքից սահմանակից է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի, հարավից Սառնաղբյուրի և Լանջիկի, իսկ արևելքից՝ Պեմզաշենի և Լեռնակերտի համայնքների վարչական տարածքներին:

Բնակավայրն ունի գեղատեսիլ դիրք: Գտնվում է Երևան-Գյումրի միջպետական ճանապարհի հարևանությամբ, շրջապատված է սարերով, ալպիական մարգագետիններով: Բնակավայրից 5 կմ հեռավորությամբ գտնվում է Սառնաղբյուրի ջրամբարը: Խմելու ջուրը մաքուր է ու սառնորակ:

Տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1760 մ. բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10 - 12 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-500մմ, որոնք առանձնահատուկ են ապրիլ-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրի տարածքը մշտապես վտանգված է կարկտահարությամբ, ուժեղ քամիներով ու տևական երաշտով: Տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 1415.66 հա., որից 1246.5 հա գյուղատնտեսական նշանակության հողերն են, հանքավայրերի հողերը կազմում են 18.86 հա, արդյունաբերական, արտադրական նշանակության հողերը՝ 9.13 հա, պատմամշակութային և հանգստավայրերի հողերը՝ 8.05 հա, ջրային ֆոնդի հողերը՝ 1.48հա, իսկ մնացածը՝ ճանապարհների, կոմունալ ենթակառուցվածքների, ընդհանուր օգտագործման և այլ նշանակության հողերն են:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 75.66 հա.:

Բնակավայրը նախկին շրջկենտրոնից գտնվում է 1 կմ., մարզկենտրոնից՝ 27կմ. և մայրաքաղաքից՝ 90 կմ. հեռավորության վրա: Բնակավայրի հարևանությամբ են անցնում Գյումրի-Երևան միջպետական նշանակության ճանապարհը և Գյումրի-Մարալիկ երկաթուղին:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, շինարարական ավազով ու կավով:

1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ տոհմագրական տվյալների՝ Ձորակապ գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Բասենի, Կարսի, Վանի և այլ գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Հետագայում գյուղը համալրվել է 1915 թվականի եղեռնից փրկված տասնյակ գաղթական ընտանիքներով:

Ըստ տոհմագրական տվյալների՝ 1831 թ-ին գյուղն ունեցել է 182, 1897թ.-ին՝ 836, 1926 թ-ին՝ 962, 1939 թ-ին՝ 908, 1959 թ-ին՝ 658, 1970 թ-ին՝ 878, 1979 թ-ին՝ 961 հայ բնակիչ:

Բնակավայրը հիմնականում զարգացում է ապրել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գյուղն ունեցել է 170 տնտեսություն՝ շուրջ 1000 բնակչությամբ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է: Հետպատերազմյան ժամանակաշրջանում համայնքը առավելագույն՝ շուրջ 1500 բնակչություն ունեցել է 1980-1985 թվականներին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 250 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 20-30 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

Համայնքի բնակչության կազմն՝ ըստ 2016թ. հաշվառման / մարդ /.

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1232
- Այդ թվում՝ տղամարդ - 637, Կին՝ - 595
- Տնային տնտեսությունների թվաքանակը - 273
- Առկա բնակչություն - 1057
- Առկա տնային տնտեսությունների թիվը - 239
- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 5 տարեկան / - 115
որից՝ մինչև 1 տարեկան – 13
1-2 տարեկան – 35
3-4 տարեկան – 34
5-6 տարեկան - 32
- Դպրոցական տարիքի երեխաներ / 6 – 17տարեկան / - 248
որից՝ 7-10 տարեկան – 80
11-14 տարեկան - 83
15-17 տարեկան - 82
- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 591
որից՝ 18-22 տարեկան - 141
23-45 տարեկան - 238
46-64 տարեկան - 212
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 103
- Ընտրողների թիվը - 909
- Կենսաթոշակառուների թիվը - 146
- Հայրենական պատերազմի մասնակիցներ - 0

- Հաշմանդամներ – 112
այդ թվում`
- Մանկուց հաշմանդամներ – 1
- Ազատամարտիկներ – 22
- Փախստականներ – 0
- Նպաստառու ընտանիքներ – 45
- 0-16 տարեկան 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ – 28
- Միայն ծերերից կազմված ընտանիքներ - 17
- Աշխատունակ բնակչություն – 747
- Զբաղբաժների թիվը - 527
- Գործազուրկների թիվը – 220
- Միջին տարեկան ծնունդը - 14
- Միջին տարեկան մահացությունը` 8
- Ամուսնությունը` 6
- Այլ ազգիներ – 4:

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի /մարդ /

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 320
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 18
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր - 52
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 39
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 16
- Աշակետոներ /16 տարեկան և բարձր/ - 34
- Ուսանողներ - 26
- Բանակում ծառայողներ – 11:

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 320
- Հանքագործական արդյունաբերություն – 12
- Մշակող արդյունաբերություն/այդ թվում գյուղատնտեսական հումք վերամշակող/ -

- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում - 4
- Շինարարություն - 6 50
- Առևտուր և այլ սպասարկումներ – 6
- Տրանսպորտ և կապ - 2
- Տեղական ինքնակառավարում – 10
- Կրթություն – 26
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 7
- Կոմունալ և անհատական ծառայություններ - 4
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ - 175:

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 7
- Հիմնական – 107
- Միջնակարգ - 385
- Միջնակարգ մասնագիտական – 125
- Բարձրագույն - 123

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղվածների թիվը

- Պետական մարմիններում - 39
- Տեղական ինքնակառավարման մարմիններում – 10

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավա-անի /ավա-անու 5 անդամ / և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրենց լիազորություններն ստանձնել է 2016 թվականի նոյեմբերի 14-ից: 2016 թվականի հոկտեմբերի 2-ին Ձորակապի համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով, առաջադրված երկու թեկնածուներից համայնքի ղեկավար է ընտրվել` Արամ Հակոբի Մարտիրոսյանը:

Արամ Մարտիրոսյան ծնված 1983թ.,Անիի շրջանի Ձորակապ գյուղում, աշխատավորի ընտանիքում, ունի բարձրագույն կրթություն,ՀՀԿ անդամ է2016 թվականից: Համայնքի

ղեկավարի պաշտոնում է 2016 թվականից: Հանդես է բերում հասարակական և քաղաքական բարձր ակտիվություն: Մեծ հարգանք ու վստահություն է վայելում համայնքի բնակչության շրջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

<i>N</i>	<i>Անունը, ազգանունը</i>	<i>Ծննդյան թիվը</i>	<i>Սեռը</i>	<i>Կրթությունը</i>	<i>Կուս. Պատկանելությունը</i>	<i>Լիազորությունների ստանձնման ժամկետը</i>	<i>Որերրորդ անգամ է ընտրվել</i>
1.	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ	09.02.1958թ.	ար.	միջնակարգ		14.11.2016թ.	ստաջին
2.	ԱԼԲԵՐՏ ՀԱՎՈՒՅԱՆ	23.03.1984թ.	ար.	բարձրագ.		14.11.2016թ.	ստաջին
3.	ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ	07.03.1980թ.	ար.	միջ. մասն.		14.11.2016թ.	երկրորդ
4.	ԱՐՄԵՆ ԻԳԻԹՅԱՆ	30.04.1972թ.	ար.	բարձրագ.		14.11.2016թ.	ստաջին
5.	ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿ	09.05.1955թ.	ար.	միջ. մասն.		14.11.2016թ.	երկրորդ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն համայնքի ղեկավարի կողմից ձևավորվել է աշխատակազմ՝ հետևյալ կազմով՝

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով
- Անչափահասների հարցերի հանձնաժողով
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով
- Արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ներքին հարաբերությունների սխեման ներկայացված է թիվ 1 հավելվածի տեսքով:

<i>Հ/հ</i>	<i>Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)</i>	<i>Հաստիքների քանակը</i>	<i>Հաստիքային միավորը</i>	<i>Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)</i>
------------	--	--------------------------	---------------------------	---

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

1.	Համայնքի ղեկավար	1	1	250000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	132000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
2.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	197400
3.	Գլխավոր մասնագետ-հաշվապահ (2.3-1)	1	1	195300
4.	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	73000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
5.	Ակումբավար	1	1	73000
6.	Համակարգչի օպերատոր	1	1	80000
7.	Գրադարանավար	1	1	73000
8.	Հավաքարար	1	1	73000
9	Գյուղապետարանի պահակ	1	1	80000
10	Ընդամենը	10	10	976700

1.5. ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի «Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Վերանորոգման կարիք ունի համայնքային կենտրոնի դեր ու նշանակություն ունեցող գյուղապետարանի շենքը, որը նախկինում օգտագործվել է, որպես կոլտնտեսության գրասենյակ: Նրանում են տեղակայված գյուղապետարանը, բուժ. մանկաբարձական կետը, գրադարանը, բնակչության հանգստի ու ազատ ժամանցի սրահը, հանդիսությունների փոքր դահլիճը:

Իսկելու ջրի ներտնտեսային ցանցը կառուցվել է 1960-70 - ական թվականերին և ունի 4000մ. ընդհանուր երկարություն: Այն օրենքով սահմանված կարգով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով շահագործման է հանձնված «Շիրակջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը: Անցած տարիներին ցանցի առանձին հատվածներ ենթարկվել են վերանորոգման և ընդլայնվել են: Իսկ 2011-2012 թվականներին KFW գերմանական վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:

Համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգը կառուցվել է 1982 թվականին և նախատեսված է 310 հա վարելահողերի ոռոգման համար: Համայնքը ոռոգման ջուրը ստանում է բնակավայրից 5 կմ հեռավորության վրա գտնվող Սոնաղբյուրի ջրամբարից՝ ինքնահոս եղանակով: Սակայն ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում է 80 հա վարելահող: Ոռոգման համակարգը օրենքով սահմանված կարգով անժամկետ, անհատույց, շահագործման է տրամադրված <<Շիրակ>> ջուր օգտագործողների ընկերությանը:

Համայնքն ունի շուրջ 3000 գծ.մ ընդհանու երկարության կեղտաջրերի հեռացման համակարգ, որն սպասարկվում է համայնքի կողմից: 2010 թվականին ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված շուրջ 4.0 մլն դրամ ներդրումներով կատարվել են ցանցի ընդլայնման աշխատանքներ: Ներկայումս կոյուղացված է բնակավայրի մոտ 70 տոկոսը:

12

2009 թվականին պետետական բյուջեի ֆինանսավորմամբ ամբողջությամբ ասֆալտապատվել է Գյումրի-Երևան մայրուղի տանող /Սառնաղբյուրի խաչմերուկ/ միջհամայնքային նշանակության ճանապարհը:

2015 թվականին մարզպետարանի հրատապ ծրագրի միջոցներով ասֆալտապատվեց ներհամայնքային թիվ 1 փողոցը , իսկ 2016 թվականին համայնքի բյուջեի միջոցներով ասֆալտապատվեց համայնքի թիվ 3 փողոցը մոտ 350 մ երկարությամբ:

Համեմատաբար բարվոք վիճակում է բուժ. մանկաբարձական կետը, որը նորոգվել է <<ՆՈՎԱ>> կազմակերպության և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցներով:

Ցանկապատված և բարեկարգված է գյուղի գերեզմանոցը: Այն մշտապես գտնվում է ինչպես գյուղապետարանի, այնպես էլ համայնքի բնակչության ուշադրության և հոգածության ներքո:

Նորացման կարիք ունի գյուղապետարանի գույքն ու հանդերձանքը:

Համայնքի սեփականության գույքի ցանկը

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Հաշվեկշռային արժեքը /հազ. դրամ/	Տեխնիկական վիճակի բնութագիր
1	Գյուղապետարանի շենք	հատ	1	4763,8	Ենթակա է հիմնանորոգման
2	Բազզայի պահակատուն	հատ	2	80,0	Ենթակա է

					հիմնանորոգման
3	Համակարգիչներ	հատ	3	-----	Բարվոք վիճակ
4	Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	կմ	3.0	622,0	Ենթակա է նորոգման
5	Գրադարանի գրքային ֆոնդ	հատ	7769	342,0	Բարվոք վիճակ
6	Հուշարձան	հատ	1		Ենթակա է նորոգման
7	Գերեզմանատուն	հատ	1		
8	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	4.0		Ենթակա է նորոգման
9	Դաշնամուր «Նոկոյուրն»	հատ	1	150,0	Բարվոք վիճակ
10	ռեգերվուարներ	հատ	11	470,0	Բարվոք վիճակ
	Աթոռներ փայտից փափուկ	հատ	9	71,6	Բարվոք վիճակ
	Դահլիճի նստատեղեր	հատ	167	-----	Բարվոք վիճակ

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

13

Բնակավայրը ունի կեղտաջրերի հեռացման համակարգ:

Կեղտաջրերի հեռացումն իրականացվում է 3000 գծ.մ ընդհանու երկարության կոյուղու համակարգի, իսկ առանձին տնտեսությունների կողմից անհատական խորքային հորերի միջոցով:

Բնակավայրը չունի ձնհալի և անձրևաջրերի հեռացման ինժեներական կառուվածքներ: Այն կատարվում է բնական և հորատված առվակների միջոցով, որը պարբերաբար մաքրվում է գյուղապետարանի և համայնքի բնակիչների կողմից:

Բնակավայրում իրականացվում է կանոնակարգված աղբահանություն: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է գյուղապետարանի կողմից շաբաթը մեկ անգամ :

Բնակավայրը չունի անտառային շերտ, համայնքային նշանակության այգի կամ հանգստի ծառատունկ գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա բնակիչների սեփականությունը հանդիսացող 254 անհատական առանձնատներ՝ 29727 քառ. մ. ընդհանուր մակերեսով:

Համայնքի միակ բազմաբնակարան բնակելի շենքը ունի 4 բնակարան՝ 420 քառ. մ. ընդհանուր մակերեսով, որոնք սեփականաշնորհված են ուսուցիչների ընտանիքների:

Բնակավայրը գտնվելով 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ 40 %-ը ստացել է 2-3 աստիճանի վնասվածություն և կարիք ունեն ուժեղացման ու վերանորոգման:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 22 երիտասարդ ընտանիքներ, որոնք ներկայումս բնակվում են ծնողների հետ համատեղ կամ վարձով:

Համայնքում կա 6 անավարտ բնակելի տներ, որոնց շինարարությունը շուրջ 20 տարի է ինչ դադարեցված է համապատասխան միջոցների բացակայության պատճառով:

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համյնքի խմելու ջուրը մատակարարվում է Կրասար-Մարալիկ մայր ջրատարից և Արագած լեռան ստորոտի <<Չլկաններ>> կոչվող բնական աղբյուրներից՝ ինքնահոս եղանակով:

14

Խմելու ջրի ներտնտեսային ցանցը կառուցվել է 1960-70 - ական թվականներին և ունի 4000մ. ընդհանուր երկարություն: Այն օրենքով սահմանված կարգով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով շահագործման է հանձնված <<Շիրակջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը: Անցած տարիներին ցանցի առանձին հատվածներ ենթարկվել են վերանորոգման և ընդլայնվել են: Իսկ 2011-2012 թվականներին KFW գերմանական վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:

Բնակավայրը ներկայումս ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ամռան ժամանակաշրջանում <<Չլկաններ>> կոչվող բնական աղբյուրների ջրային պաշարների նվազման հետ կապված բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով:

Համայնքն ունի 310 հա անձրևացման եղանակով ոռոգման համակարգ, որը կառուցվել է 1982 թվականին: Համայնքը ոռոգման ջուրը ստանում է բնակավայրից 5 կմ հեռավորության վրա գտնվող Սոնաղբյուրի ջրամբարից՝ ինքնահոս եղանակով: Մակայն ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում է 60 հա վարելահող, որից 20 հեկտարը տնամերձ հողամասեր են: Ոռոգման համակարգը օրենքով սահմանված կարգով անժամկետ, անհատույց, շահագործման է հանձնված <<Շիրակ>> ջուր օգտագործողների ընկերությանը:

Ըստ նախնական հաշվարկների ոռոգման համակարգի վերանորոգման համար կպահանջվի շուրջ 80 մլն. դրամի ներդրում:

Գյուղապետարանի կողմից հայտ է ներկայացվել «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի» /ԻՖԱԴԻ/ գրասենյակ ցանցի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու համար և իր պատրաստակամությունն է հայտնել կատարել անհրաժեշտ ֆինանսական և նյութական ներդրումներ:

Ցանցի վերանորոգմամբ կարող է ոռոգվել 310 հա վարելահող և համայնքում զարգացնել կարտոֆիլի արտադրության ճյուղը:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Գյումրի-Երևան մայրուղի տանող /Սառնաղբյուրի խաչմերում/ միջհամայնքային նշանակության ճանապարհը ասֆալտապատ է, որը 2009 թվականին իրականացվել է պետական բյուջեի միջոցներով: 15

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային շուրջ 4 կմ և դաշտամիջյան 6 կմ երկարության ճանապարհները:

Բնակավայրը չունի փոստային բաժանմունք և սպասարկվում է Մարալիկի բաժանմունքի կողմից: Բնակավայրը ապահովված է «ՎԻՎԱՍԵԼ», «ԲԻԼԱՅՆ», «ՕՐԱՆԺ» բջջային և «ԲԻԼԱՅՆ»-ի կողմից սպասարկվող ֆիկսված հեռախոսակապով:

Բնակավայրը ընդունում է 4 հանրապետական, 3 մարզային և Ռուսաստանի Դաշնության 2 հեռուստաալիքներ, ինտերնետային կապը հասանելի է:

Ձորակապ-Երևան, Ձորակապ-Գյումրի, Ձորակապ-Արթիկ տրանսպորտային կապն ապահովվում է Մարալիկ քաղաքը սպասարկող միկրոավտոբուսների և ավտոբուսների երթուղիների միջոցով:

Բնակավայրից 1 կմ հեռավորության վրա է գտնվում Մարալիկի երկաթուղային կայարանը, որը շուրջ 18 տարի է ինչ չի գործում:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է: Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքը անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի, <<Հայաստան համահայկական հիմնադրամի>>, <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>>, <<Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>>, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և այլ կազմակերպությունների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1415.66 հա. է, որից`

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր – 1246.5 հա,

այդ թվում`

- վարելահողեր – 543.33 հա,

որից`

-սեփականաշնորհված – 452.15 հա

-համայնքային սեփականության – 91.18 հա.

- պտղատու այգիներ -2.18 հա,

- խոտհարքներ – 0.0 հա.

- արոտավայրեր – 661.89 հա,

այլ հողատեսքեր – 39.10 հա:

Ոռոգելի վարելահողեր – 310 հա, որից

փաստացի ոռոգվող – 60 հա:

Սեփականաշնորհված մեկ հողբաժնի չափը կազմում է **0.87 հա:**

2. Բնակավայրի հողեր – 75.66 հա,

3. Արդյունաբերական, արտադրական նշ հողեր 9.13 հա,

4. Հանքավայրերի հողեր – 18.86 հա,

5. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 19.70 հա.

6. Պատմամշակութային նշանակության հողեր – 8.05 հա.

7. Ջրային ֆոնդի հողեր – 1.48հա,

8. Հատուկ պահպանվող տարածքներ – 0.0 հա,

9. Այլ հողեր – 36.28 հա:

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը դաշտավարությունն ու անասնապահությունն է:

Ոռոգման համակարգի քայքայվածության պատճառով համայնքը լուրջ ժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու համար:

Համայնքում կազմավորված են 273 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 543. հա վարելահող: Համայնքի բնակչության սեփականությունը հանդիսացող վարելահողերը կազմում են 452.15 հա, իսկ համայնքայինը՝ 91.18 հա, որը օրենքով սահմանված կարգով վարձակալության իրավունքով օգտագործման է տրված 119 անձանց: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Վերջին տարիներին համայնքում զգալիորեն ավելացել է կարտոֆիլի մշակության ծավալները: 17

Համայնքի տարածքում հակակարկտային կայանքներ տեղադրված չեն և գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը հիմնականում կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից և ոռոգման հնարավորություններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ: Երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 430 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 185 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 289: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ և մեղվապահությամբ:

Գյուղում կա 14 տրակտոր, 3 կոմբայն, 1 խոտհնձիչ, 25 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղատնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործում

Հողատեսքի անվանումը	2016թվական			
	Քանակը /հա/	Որից Ոռոգելի /հա/	Փաստացի ոռոգվող /հա/	Որից Օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	1246.5	310.0	60.0	1025.51
Վարելահող	543.33	307.82	57.82	543.33
Պտղատու այգիներ	2.18	2.18	2.18	2.18
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0	0.0	0.0
Խոտհարքներ	0.0	0.0	0.0	0.0
Արոտավայրեր	661.89	0.0	0.0	480.0
Այլ գյուղատնտեսական հողեր	39.10	0.0	0.0	0.0

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /543.33 հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝	450	2.0	82.8
	Ցորեն	320	2.0	X
	Գարի	130	2.0	X
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	X
2.	Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝	35	3.0	6.4
	Կորնզան	30.0	3.0	X
	Առվույտ	5.0	3.0	X
3.	Ընդամենը բանջարաբուստանային մշակաբույսեր, այդ թվում՝	25.0	22.9	4.6
	Կարտոֆիլ	22.0	25.0	X
	Կաղամբ	2.0	10.0	X
	Գազար	0.2	5.0	X
	Բանջարաբուստանային այլ մշակաբույսեր	0.8	2.5	
4.	Այլ /ցեղ/	33.33		6.2

<i>ԸՆԴԱՄԵՆԸ</i>	<i>2089.43</i>	<i>X</i>	<i>100.0</i>
-----------------	----------------	----------	--------------

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
Հացահատիկ	
Ցանկատարածքը /հա/	450.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	2.0
Համախառն բերքը/տոննա/	900.0
Կերային մշակաբույսեր	
Ցանկատարածքը	35.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	3.0
Համախառն բերքը	115.0
Կարտոֆիլ	
Ցանկատարածքը	22.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	25.0
Համախառն բերքը	550.0
Կաղամբ	
Ցանկատարածքը	2.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	10.0
Համախառն բերքը	20.0
Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	
Ցանկատարածքը	1.0
1 հեկտարի միջին բերքատվությունը	2.5
Համախառն բերքը	2.5

4. Անասնազլխաբանակը

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/
	01.01.2016թ. դրությամբ
Խոշոր եղջերավոր անասուններ	430
որից՝ կովեր	185
Խոզեր	82
ոչխարներ և այծեր	289
թռչուններ	2900
մեղվաբուծության սահմանափակներ	281

5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական

Մթերատվությունը	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.8
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաընտանիքի մթերատվությունը /կգ/	10.0
Արտադրության ծավալները	
Մսի արտադրություն /տոննա/	24.0
Կաթի արտադրություն /տոննա/	481.5
Բրդի արտադրություն /տոննա/	0.73
Ձվի արտադրություն /հազ. հատ/	75.0
Մեղրի արտադրություն /տոննա/	2.81

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ և տրանսպորային միջոցներ

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	4
Անվավոր տրակտոր	հատ	13
Հացահատրկային կոմբայն	հատ	3
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Տրակտորային կցասայլ	հատ	12
Գութան	հատ	6
Կուլտիվատոր	հատ	5
Շարքացան	հատ	6
Հակավորող մեքենա	հատ	4
Կերամանրիչ մեքենա	հատ	1
Բեռնատար ավտոմեքենա	հատ	16
Մարդատար ավտոմեքենա	հատ	139

1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործում: Մինչև 1990 թվականը համայնքի աշխատունակ բնակչության 60 տոկոսը զբաղվածություն են ունեցել Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկայում, Լուսատեխնիկական էլեկտրոսարքավորումների գործարանում, շինանյութերի և իրերի կոմբինատում, կապի, տրանսպորտի, գյուղատնտեսության և բնակչության սպասարկման տարբեր ձեռնարկություններում ու կազմակերպություններում:

Ներկայումս համայնքի արածքում գործում է տուֆ քարի արտադրության և վերամշակման 1 կազմակերպություն, որի գործունեությունն ունի սեզոնային բնույթ: Քարի արտադրությունում համայնքից զբաղված են ընդամենը 4 մարդ, իսկ 28 մարդ աշխատում է Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկայում: 21

Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում համայնքում կարող է զարգանալ գյուղատնտեսական մթերքների վերամշակման ճյուղը /մսամթերքի արտադրություն, կաթի վերամշակում և այլն/:

1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 350 աշակերտ տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 240 աշակերտ: Այն կառուցվել է 2002 թվականին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի և պետական բյուջեի միջոցներով: Դպրոցն ապահովված է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Այդ գործում իրենց ներդրումներն են ունեցել Ռուսաստանի Դաշնությունում աշխատող համայնքի գործարարները:

Դպրոցն ունի 32 մանկավարժ և 10 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 28-ը կանայք են, իսկ 31-ն ունեն բարձրագույն կրթություն:

Դպրոցը տարածաշրջանում աչքի է ընկնում ուսման բարձր առաջադիմությամբ, իր բարի ավանդույթներով և կազմակերպված մանկավարժական կոլեկտիվով: Դպրոցի շրջանավարտների 70-80 տոկոսը ընդունվում են Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Դպրոսի աշակերտների բաշխումն ըստ դասարանների և տարիքային խմբերի

N	Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի			
		Մինչև 3-4 տարեկան		5-6 տարեկան	
1.	Դպրոցահեն նախակրթարան	Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
2.	Տարրական դպրոց /1-4-րդ դասարաններ/	Մինչև 7 տարեկան		7 տարեկանից բարձր	
		Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
3.	Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/	Տղա		Աղջիկ	
4.	Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/	Տղա		Աղջիկ	
	Ընդամենը	240			

Համայնքում մշկութային օջախներ, երաժշտական, արվեստի և մարզական դպրոցներ չկան: Համայնքի շնորհալի երեխաները հաճախում են Մարալիկ համայնքում գործող համապատասխան դպրոցներ:

Համայնքի բնակչության ազատ ժամանցի կազմակերպման համար որոշակի հարմարություններ են ստեղծվել գյուղապետարանի շենքում: Գյուղապետարանում է տեղակայված գրադարանը, որն ունի շուրջ 7769 կտոր գրականություն:

Գյուղապետարանում որոշակի պայմաններ են ստեղծվել նաև համայնքի շնորհալի երեխաների երաժշտական և գեղագիտական դաստիարակության համար: Գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի կողմից կազմակերպվում է մշակութային խմբերի ու խմբակների ուսուցում:

Համայնքը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ մշակույթի օջախ կամ համայնքային կենտրոն կառուցելու և այն կահավորելու համար: Իսկ պետական և ներդրումային ծրագրերի ու հիմնադրամների կողմից մշակութային օջախների կառուցումը դեռևս չի համարվում որպես հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր:

Համայնքը մանկապարտեզ չունի և 4-6 տարեկան թվով **28** երեխաների նախադպրոցական կրթությունն ու դաստիարակությունն իրականացվում է դպրոցական

նախակրթարանի միջոցով, որտեղ ստեղծվել են բավարար պայմաններ ու հարմարություններ:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Մարալիկի առողջության կենտրոնի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը նորոգվել է 2005 թվականին՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան <<ՆՈՎԱ>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրման շնորհիվ:

Համայնքը չունի մարզադաշտ և սպորտային դահլիճ: Համայնքի պատանիների ու երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և սպորտային խաղերի անցկացման համար օգտագործվում են Մարալիկ քաղաքի համապատասխան հարմարությունները:

1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը:
- Տուֆ քարի պաշարների առկայություն:
- Սառնաղբյուրի ջրամբարին մոտ գտնվելը:
- Ոռոգման ցանցի առկայությունը:
- Մարալիկ քաղաքի հարևանությամբ գտնվելը:
- Գյումրի-Երևան միջպետական նշանակության ճանապարհին մոտ գտնվելը:
- Երկաթուղային կային մոտ գտնվելը:
- Ինքնահոս եղանակով խմելու և ոռոգման ջրի առկայությունը:
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգման համակարգի քայքայվածությունը:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասված մեծ վնասները:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Թվով 6 անավարտ բնակելի առանձնատների առկայությունը:

- Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 22 երիտասարդ ընտանիքների առկայությունը:
- Մշակույթի տան և մանկապարտեզի բացակայությունը:
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները:

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բամբակամանվածքային ֆաբրիկայի արտադրական ծավալների ավելավաճմամբ նոր աշխատատեղերի ստեղծում:
- Համայնքի ոռոգման համակարգի վերանորոգման և ցանցի ըղլայնման միջոցով դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում:
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրում:

1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆՔՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Սառնադրյուրի ջրամբարի պատնեշի հնարավոր փլուզման տեխնաձին վտանգը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/.
- Մշակույթի տան, մանկապարտեզի, սպորտային և մարզական հարմարությունների բացակայությունը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Համայնքի ռազմավարությունն է՝

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

2.2. Հիմնական նպատակները

- Ոռոգման համակարգի հիմնանորոգում և ցանցի ընդլայնում:
- Բնակավայրի կոյուղու ցանցի ընդլայնում:
- Մշակույթի տան կամ համայնքային կենտրոնի կառուցում:
- Հանգստի գոտու կառուցում:
- Մարզադահլիճի և մարզադաշտի կառուցում:
- Մանկապարտեզի կառուցում:
- Ներհամանքային և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում
- Գյուղացիական տնտեսությունների զարգացում:
- Բամբակամանվածքային ֆաբրիկայի արտադրության ծավալների ավելացում, նոր աշխատատեղերի ստեղծում: 25
- Տուֆ քարի հանքերի շահագործման ծավալների ավելացում, վերամշակման ճյուղի զարգացում:
- Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներին լուծում տալու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումն և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 3 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են **95-100** տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /սանիտարական մաքրում, աղբահանություն, ներհամայնքային ճանապարհների փոսալցում, կոյուղու և փողոցների լուսավորության ցանցերի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, ուսանողների ուսման վարձերի վճարմանը, խմելու ջրի և կոյուղու ներքին ցանցերի վերանորոգմանն ու ընդլայնմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը և ընթացիկ ծախսերի կատարմանը: Համայնքի տեղական բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: 26

Համայնքում առկա հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու ներդրումային հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հազ. դրամ

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ. փաստացի կատարված	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
	Եկամուտներ, ընդհամենը	27641,0	28501,6	29311,2	30497,3	31597,3	31847.3

Ա	Հարկային եկամուտներ, այդ թվում	5723,0	6147,3	6147,3	6247,3	6347,3	6447,3
1	Հողի հարկ	2500,0	2747,3	2747,3	2747,3	2747,3	2747,3
2	Գույքահարկ	3223,0	3400,0	3400,0	3500,0	3600,0	3700,0
3	Այլ հարկային եկամուտներ	-----					
Բ	Տուրքեր	762,0	578,7	578,7	650,0	650,0	800,0
1	Պետական տուրքեր						
2	Տեղական տուրքեր	762,0	578,7	578,7	650,0	650,0	800,0
	Ոչ հարկային եկամուտներ	-----					
1	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	1111,4	1585,2	1585,2	1600,0	1600,0	1600,0
2	Գույքի վարձավճարներ	----					
3	Տեղական վճարներ	-----					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	-----					
Գ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	20044,6	20044,6	21000,0	22000,0	23000,0	23000,0
Դ	Եկամուտներ, կապիտալի գործառնություններից	-----					
Ե	Տարեսկզբի ազատ մնացորդ	10752,1	4200,0	5200,0	7300,0	8200,0	9100,0
Զ	Ճոնդային բյուջե	10752,1	4200,0	5200,0	7300,0	8200,0	9100,0
	Բյուջեի կատարում /տոկոս/						
	Սեփական եկամուտների կատարում /տոկոս/	91,3	100	100	100	100	100

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. Դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. Դրամ/	Համայնքի ներդրում /հազ. Դրամ/	Կատարման ժամկետը /հազ. Դրամ/
1	Հայրենակն մեծ պատեր. Զոհվածներին նվիրված հուշարձանի պատվանդանի նորոգում	5000.0	2000.0	3 000.0	2017թ.
2	Խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում, ցանցի	5 000.0	3 000.0	2 000.0	2019թ.

	ընդլայնում:				
3	Փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:	2 000.0	0.0	2 000.0	2018թ.
4	Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:	1 740.0	0.0	1 740.0	2017թ.

3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

Հազ. Դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.16թ. դրությամբ	Ապառքների հավաքման կանխատեսում					Անհուսալի ապառքներ
		2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	
Հողի հարկ	1905,8	205,8	500,0	600,0	300,0	300,0	-
Գույքահարկ	1444,6	1200,6	244,0	-	-	-	-
Հողի վարձավճար	250,3	250,3	-	-	-	-	-

3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 15 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	Այդ թվում		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակերպ.	Համայնքի ներդրում	
1	Հուշարձանի աստիճանների բազալտից սալիկապատում	գյուղապետարան	2300.0 դրամ	0	2300.0 դրամ	2016թ.
2	Դպրոցի պատուհանների հիմնանորոգում	Հրատապ ծրագիր	12000.0 դրամ	12000.0	0.0	2015թ.
3.	Բուժ. Մանկաբարձական կետի վերանորոգում	ԱՄՆ դ/տ <<ՆՈՎԱ>> ծրագիր	400 հազ.դրամ	300 հազ.դրամ	100 հազ.դրամ	2005թ.
4.	Համայնքի թիվ 1 փողոցի ասֆալտապատում	Հրատապ ծրագրով	20000.0 դրամ	Մարզպետարան 20000.0	0	2015թ.
5.	Համայնքում դպրոցի կառուցում	Սոց. հիմնադրամ	80 հազար ԱՄՆ Դ.	0.0	0.0	2001-2002թթ.

6.	Համայնքի թիվ 3 փողոցի ասվալատապատում	գյուղապետարան	11525.0 դրամ	0.0	11525.0 դրամ	2016-թ.
7.	Ներհամայնքային ճանապարհների ավագակոպճային վերանորոգում	Համայնք	1500 հազ դրամ	0.0	1500 հազ դրամ	2011թթ.

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը: 28

2016- 2020թթ. Համայնքում նախատեսվում է իրականացնել հրատապ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ոռոգման համակարգի հիմնանորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ԵՎ ԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքն ունի 310 հա անձրևացման եղանակով ոռոգման համակարգ, որը կառուցվել է 1982 թվականին և երբևէ վերանորոգման չի ենթարկվել: Համայնքը ոռոգման ջուրը ստանում է բնակավայրից 5 կմ հեռավորության վրա գտնվող Սոնաղբյուրի ջրամբարից՝

ինքնահոս եղանակով: Սակայն ցանցի քայքայվածության պատճառով փաստացի ոռոգվում է 60 հա վարելահող, որից 20 հեկտարը տնամերձ հողամասեր են:

Ցանցի քայքայվածության պատճառով մատակարարվող ջրի մոտ 50 տոկոսը մատնվում է կորուսների և նպատակին չի ծառայում: Առանձին տեղամասերում խողովակաշարերի մակերեսային լինելու պատճառով խորը վարի աշխատանքներ հնարավոր չի լինում իրականացնել: Ցանցում բացակայում են անձրևացման սարքերը, շարքից դուրս են եկել կարգավորիչ փականների մեծ մասը, քայքայված են ցանցի խողովակաշարերի 20-30 տոկոսը, վերանորոգման կարիք ունի ջրավազանը:

Ոռոգման համակարգը 2008 թվականից օրենքով սահմանված կարգով անժամկետ, անհատույց, շահագործման է հանձնված <<Շիրակ>> ջուր օգտագործողների ընկերությանը:

Գյուղապետարանի կողմից համապատասխան հայտ է ներկայացվել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> /ԻՖԱԴԻ/ գրասենյակ ցանցի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու համար: Համայնքը միաժամանակ իր պատրաստակամությունն է հայտնել կատարել անհրաժեշտ ֆինանսական և նյութական ներդրումներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊՍՏԱԿԸ

Ոռոգման համակարգի վերանորոգմամբ ոռոգելի դարձնել համայնքի գյուղացիկան տնտեսությունների սեփականությունը հանդիսացող 310 հա վարելահող, կանխել ոռոգման ջրի անտեղի կորուստներն, բարձրացնել հողերի մշակման արդյունավետությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խորացնել համագործակցության կապերը <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի (ԻՖԱԴԻ) գրասենյակի հետ: Ներկայացնել ծրագրի իրականացման անհրաժեշտության տնտեսական հիմնավորումներ և պարզաբանումներ: Հասնել նրան, որ <<Ձորակապի համայնքի ոռոգման համակարգի հիմնանորոգում>> ծրագիրը ընդգրկվի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի (ԻՖԱԴԻ) 2018 թվականին մեկնարկվող 4-րդ փաթեթում:
- Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Ապահովել ծրագրի համար անհրաժեշտ տեխնիկական պայմանները:

- Ապահովել համայնքից պահանջվող ռումարային և նյութական ներդրումները:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրարի իրականացմամբ ռոռգելի կղառնան համայնքի գյուղացիկան տնտեսությունների սեփականությունը հանդիսացող 310 հա վարելահող, կկանխվի ռոռգման ջրի անտեղի կորուստները, կբարձրանա հողերի մշակման արդյունավետությունն ու բերքատվությունը: Ցանցի վերանորոգմամբ հնարավոր կլինի զարգացնել կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբուստանային այլ մշակաբույսերի արտադրության ճյուղը:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նախատեսվում է ծրագրի ֆինանսավորումն ապահովել <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի (ԻՖԱԴԻ) կողմից:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել 310 հա ռոռգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, որն իր մեջ ներառում է Դ 100-240 մմ տրամաչափի 5000 գծ.մ խողովակաշարերի վերանորոգում, Դ 100-240 մմ տրամաչափի թվով 280 փակաների փոխարինում նորով, թվով 200 անձրևացման սարքերի տեղադրում, ջրավազանի վերանորոգում, 2000 գծ.մ. երկարության խողովակաշարերի խորոցում և այլ օժանդակ աշխատանքներ:

Ըստ նախնական հաշվարկների ռոռգման համակարգի վերանորոգման համար կպահանջվի շորջ 90 մլն. դրամի ներդրում:

Համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը կկազմի 9 մլն. դրամ, որից 4 մլն. դրամը կտրամադրվի համայնքի բյուջեից՝ գումարի տեսքով, իսկ 5 մլն. դրամը՝ շինարարական նյութերի և աշխատանքի տեքով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել իրականացնել 2018 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ոռոգման համակարգի շահագործումն ու սպասարկումը կկատարվի <<Շիրակ>> ջուր օգտագործողների ընկերության կողմից, իսկ համայնքը ըստ ամենայնի կաջակցի ցանցի սպասարկման աշխատանքներին:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ

Ձորակապի համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ

Ձորակապի համայնքի ղեկավար՝ Արամ Մարտիրոսյան:

Ծ Ր Ա Գ Ր Ի Բ թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ձորակապի համայնքային կենտրոնի շենքի վերանորոգում, անհրաժեշտ գույքի ապահովում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 31

Համայնքում մշկութային օջախներ, երաժշտական, արվեստի և մարզական դպրոցներ չկան: Համայնքի շնորհալի երեխաները հարկադրաբար հաճախում են Մարալիկ համայնքում գործող համապատասխան դպրոցներ:

Գյուղապետարանի շենքը, որը նախկինում օգտագործվել է, որպես կոլտնտեսության գրասենյակ, մշակույթի տան բացակայության պայմաններում այսօր համայնքում ունի համայնքային կենտրոնի դեր ու նշանակություն: Նրանում են տեղակայված գյուղապետարանը, բուժ. մանկաբարձական կետը, գրադարանը՝ իր 7769 կտոր գրականությամբ, բնակչության հանգստի ու ազատ ժամանցի սրահը, հանդիսությունների դահլիճը:

Համայնքի տարեց մարդկանց ազատ ժամանցի կազմակերպման և համայնքի շնորհալի երեխաների երաժշտական և գեղագիտական դաստիարակության համար համար որոշակի հարմարություններ են ստեղծվել համայնքային կենտրոնի շենքում: Գյուղապետարանի

աշխատակազմի համապատասխան մասնագետի կողմից կազմակերպվում է մշակութային խմբերի ու խմբակների ուսուցում:

Համայնքային կենտրոնի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին և մինչ օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Այն համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ շինությունն է:

Համայնքային կենտրոնի շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն հիմնականում չի ծառայում համայնքի բնակչության կարիքների համար: Մշակույթի տունը ապահովված չէ նաև անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Համայնքի ուժերով վերջին տարիներին հնարավոր է եղել մասնակիորեն վերանորոգել առանձին աշխատասենյակներ և տանիքի առանձին հատվածներ: Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել շինության հիմնանորոգման և գույքի նորացման մեծածավալ աշխատանքներ: Այն իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների կամ ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նորոգել համայնքային կենտրոնի շենքը, այն համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել գյուղապետարանի աշխատանքի, համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար: Հանդիսությունների սրահի վերանորոգմամբ աշխուժացնել համայնքում մշակութային կյանը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին /ՀՄՆՀ / ներկայացնել համայնքային կենտրոնի շենքի նորոգման և գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել համայնքային կենտրոնի շենքի նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:

- Ապահովել ՀՄՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքային կենրոնի շենքի նորոգման և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու միջոցով հարմարավետ պայմաններ ստեղծել գյուղապետարանի, բուժ. մանկաբարձական կետի աշխատանքների, համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

Կանխել համայնքային կենրոնի շենքի հետագա քայքայումը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 30.0 մլն. դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ գումարով 3 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

32

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել իրականացնել 2020 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել համայնքային կենրոնի շենքի պահպանումն ու սպասարկումը:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

ՀՀ Շիրակի մարզպետարան, Ձորակապի համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ձորակապի համայնքի ղեկավար՝ Արամ Մարտիրոսյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ Շիրակի մարզի Ձորակապ համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում, ցանցի ընդլայնում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Կրասար – Մարալիկ մայր ջրատարից և Արագած լեռան ստորոտի «Չլկաններ» կոչվող բնական աղբյուրներից՝ ինքնահոս եղանակով: Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ուսումնասիրվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի: Համայնքի ջրամատակարարման ներտնտեսային ցանցը կառուցվել է 1960-70-ական թվականներին : Ջրագծի այն հատվածը , որը սպասարկվում է «Շիրակջրմուղկոյուղի» փբը-ի կողմից ենթարկվել է հիմնովին վերանորոգման և այն անհատույց տրամադրվել է «Շիրակջրմուղկոյուղի» փբը-ին , համայնքի այդ հատվածում ջրամատակարարումը անխափան է և ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Իսկ համայնքի Չաիրներ կոչվող տարածքը , որտեղ բնակչությունը շուրջ 70 ընտանիք օգտվում է Արագածի «Չլկաններ » կոչվող բնական աղբյուրներից , ջրագծերը մաշված են գրեթե ամբողջովին և ենթակա են նորոգման:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել ջրագծերի վթարներն ու կորուստները, հնարավոր աղտոտումները: Բնակավայրի ծայրամասային բնակելի տներն ապահովել խմելու ջրով: Բարելավել բնակչության կենցաղային պայմանները, թեթևացնել հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել խմելու ջրի ներհամայնքային ցանցի տեխնիկական վիճակը, ճշտել ջրատարների առավել քայքայված տեղամասերը, վերանորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և նախագծա- նախահաշվային փաստաթղթեր:
- Ցանցի առանձին տեղամասերում իրականացնել 1500գծ.մ ընդհանուր երկարության խմելու ջրագծի նորոգման աշխատանքներ:
- Բնակավայրի ծայրամասային բնակելի տների համար անցկացնել 1000գծ.մ. ընդհանուր երկարության Դ30-50մմ տրամաչափի նոր ջրագծեր:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքնի դիմաց>> ծրագրի օժանդակությամբ:
- ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքնի դիմաց>> ծրագրի համար կազմել հայտ-առաջարկ և այն նախատեսված ժամկետում ներկայացնել ծրագրի իրականացման Վանաձորի գրասենյակ:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցներն ապահովել համայնքի բյուջեի, համայնքի սեփականություն հանդիսացող և չօգտագործվող խողովականների և համայնքի անդամների ներդրումների միջոցով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

34

Կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները, ծայրամասային բնակելի տները կապահովվեն խմելու ջրով: Կբարելավվի բնակչության կենցաղային պայմանները, կթեթևանա հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախատեսվում է 1000գծ.մ. երկարության Դ30-50մմ տրամաչափի նոր ջրագծի կառուցման աշխատանքներ, որի իրականացման համար ըստ նախնական հաշվարկների կպահանջվի 5.0 մլն. դրամ:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների իրականացման համար ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքնի դիմաց>> ծրագրով նախատեսել իրականացնել 3000 մարդ/օր ծավալի աշխատանքներ:

Պոմպակայանի վերանորոգման, պահանջվող շինարարական նյութերի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների ապահովման համար համայնքի բյուջեից կատարել 2.0 մլն.դրամի հատկացում:

Գործող ցանցի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքներն իրականացնել համայնքի սեփականություն հանդիսացող և չօգտագործվող 1200 գծ.մ երկարության մետաղյա խողովակաշարը ապամոնտաժելու միջոցով:

Ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավել համայնքի աշխատունակ բնակչությանը և համայնքում առկա տրանսպորտային ու տեխնիկական միջոցները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

1-ին փուլ

2017 թվականի մայիս-օգոստոս ամիսներին նախատեսել խմելու ջրի ներտնտեսային ցանցի 1000 գծ.մ. հատվածի նորոգման աշխատանքները:

2-րդ փուլ

2018 թվականի մայիս-օգոստոս ամիսներին նախատեսել խմելու ջրի ներտնտեսային ցանցի 500 գծ.մ. հատվածի նորոգման և 1000գծ.մ. երկարության Դ30-50մմ տրամաչափի նոր ջրագծի կառուցման աշխատանքները:

35

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքնի դիմաց>> ծրագիր, Ձորակապի համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Ձորակապի համայնքի ղեկավար՝ Արամ Մարտիրոսյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ձորակապի համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի թիվ 2, 3, 16, 12, և 9 փողոցներում գիշերային լուսավորության ցանցը բացակայում է: Ցանցի բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել է թափառող շների հարձակումներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի կառուցման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի անցկացման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ::
- <<Հայաստանի էլեկտրացանցեր>> Ղարս մասնաճյուղի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագիր՝ լուսավորության ցանցի էլ սնուցման թույլտվություն և տեխնիկական պայմաններ ստանալու համար: 36
- Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարել մրցույթ և ընտրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը կառուցող շինարարական կազմակերպությունը:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի թիվ թվով 2, 3, 16, 12 և 9 փողոցներում տեղադրել թվով 30 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցը կառուցման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումը և անխափան աշխատանքը:
- Ցանցի շահագործումն և սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիշերային լուսավորության ցանցի կառուցմամբ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի կառուցման և թվով 30 լուսարձակների տեղադրման համար կպահանջվի 2.0 մլն. դրամի ներդրում: Ծրագիրն իրականացել համայնքի բյուջեի միջոցներով:

Որպես լուսարձակների հենասյունների օգտագործել համայնքի սեփականություն հանդիսացող և չօգտագործվող Դ 150 մմ տրամաչափի 200 գծ.մ երկարության մետաղյա խողովակաշարը ապամոնտաժելու արդյունքում ձեռք բերվող խողովակները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2019թ. մայիս-օգոստոս ամիսներին:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Ձորակապի համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Ձորակապի համայնքի ղեկավար՝ Արամ Մարտիրոսյան:

37

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ձորակապի համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների և տրանսպորտային միջոցների համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գգուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային **1.0 կմ**. ընդհանուր երկարության ճանապարհահատվածներ՝ **5000քառ.մ**. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝
Փողոց թիվ 6 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.
Փողոց թիվ 7 – 300զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 15000քառ.մ.
Փողոց թիվ 8 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Փողոց թիվ 4 – 200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 1000քառ.մ.
Փողոց թիվ 5 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Փողոց թիվ 9 – 100զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 500քառ.մ.
Ընդամենը՝ 1000զծ. մ. մակերեսը՝ 5000քառ.մ.

38

2. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա դաշտամիջյան ճանապարհների **1.5 կմ** ընդհանուր երկարություն տարբեր տեղամասեր՝ **6000 քառ.մ**. ընդհանուր մակերեսով:

Այդ թվում՝

դուրաններ կոչվող հանդամաս՝ 400 զծ.մ. երկարություն, 1600 քառ.մ. մակերեսով.
ղճներ. կոչվող հանդամաս՝ 200 զծ.մ. երկարություն, 800 քառ.մ. մակերեսով թաքնալու
թաքնալու կոչվող հանդամաս՝ 300 զծ.մ. երկարություն, 1200 քառ.մ. մակերեսով.
խարաբի տակ կոչվող հանդամաս՝ 600 զծ.մ. երկարություն, 2400 քառ.մ. մակերեսով.
Ընդամեն՝ 1500 զծ. մ., մակերեսը՝ 6000 քառ. մ:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ:

Սանիտարական մաքրման է ենթակա 20000 քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 20 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրարի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյան ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
Տեխնիկական միջոցների շահագործում						
1	Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/	Ժամ	150	2000	300000	
2	Բարձիչ մեխանիզմով բարձման աշխատանքների իրականացում՝ -հանքակոպիճի բարձում՝ 100խ.մ. -ավազի բարձում՝ 80խ.մ. -շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 20խ.մ.	Խոր.մ	200	1200	240000	
3	Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում	Խոր.մ	200	612.5	300000	

	Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	840000	
Աշխատանք						
1.	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	Քառ.մ	20000	X	X	Համայնքի անդամներ
	Ընդամենը աշխատանք	X	X	X	X	
Նյութեր						
1	Հանքակոպիճ	Խոր.մ	100	X	X	Համայնքի ներդրում
2	Ավազ	Խոր.մ	80	X	X	Համայնքի ներդրում
3	Դիզելային վառելանյութ	լիտր	2000	450	900000	
	Ընդամենը նյութեր				900000	
	Ընդամենը ծախսեր				1740000	

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1740 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2019 թվականի հունիս հուլիս ամիսներին:

40

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝

Ձորակապի համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՄ

Ձորակապի համայնքի ղեկավար՝ Արամ Մարտիրոսյան:

ԾՐԱԳՐԻ ԹԻՎ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հ Հ Շիրակի մարզի Ձորակապի համայնքի Հայրենական մեծ պատերազմի զոհվածներին նվիրված հուշարձանի շրջակա համակարգի ցանկապատում կանաչապատում և հուշարձանի պատվանդանի վերանորոգում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Համայնքի Հայրենական մեծ պատերազմի զոհվածներին նվիրված հուշարձանի պատվանդանի նորոգումը , և նրա շրջակա բարելավումը նպաստում է նրա գողոցկությանը և բնակիչների ազատ ու հանգիստ շարժը դեպի հուշարձան:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Հուշարձանի պատվանդանի նորոգում և մոամոնից սալապատում , զոհվածների անունների փորագրման համար / 30 քառ.մ /

Տարածքի ցանկապատում / 60 գծմ / և տարածքի բարեկարգում / 600 քառ.մ /:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը	Չափի միավոր	քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	նշումներ
Մալապատման ցանկապատման համար շինարարական նյութեր և սալիկներ ավագ քար, ցեմենտ	Քառ.մ	30	13000	390000	
	Խոր.մ	15	6000	90000	
		20	9000	180000	
Մոամոնից սալիկներ	Քառ.,	30	13000	390000	
Փոխադրամիջոցի ծախսեր				120000	
Փորագրման աշխատանքներ				250000	
ծառատունկ				50000	

Ընդամենը ծախսեր համայնքի բյուջեից

1030000 դրամ

